ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՍՅԱՆ
ԻԶԱԲԵԼԼԱ ԲԱԲԱՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԶՄՅՈՒՌՆԱՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.164

ԱՄՓՈՓՈՒՄ

Պատմության բոլոր ժամանակաշրջաններում էլ հայ դպրոցը եղել է ազգային կրթության, լուսավորության տարածման և գոյապահպանության կարևորագույն օրրանը: Այս առումով չափազանց մեծ է 19-րդ դարի Զմյուռնիայի հայկական կրթօջախների և դրանցում հայրենանվեր գործունեություն ծավալած մտավորականների առաջադեմ գործունեությունը, որի հիմնական առաքելությունը սերունդներին հայեցի կրթելն էր, իրենց պատմական ակունքներին հաղորդակից դարձնելը և հայապահպանության գործն իրականացնելը:

Հոդվածում հնատիպ մամուլի, արխիվային նյութերի և մասնագիտական այլ աղբյուրների քննական հետազոտությամբ վերլուծել ենք զմյուռնահայ կրթական հաստատությունների՝ այսօրվա տեսանկյունից արդիական կրթադաստիարակչական բնույթի որոշ հարցեր և արժևորել առաջադեմ այն հայ մտավորականների նշանակալի դերը, որոնք սովորել, ապա նաև շարունակել են հայեցի սերունդներ կրթել Արևմտյան Հայաստանի այդ վարժարաններում:

Հիրավի, ինչպես մեծն Հր. Աճառյանն է ասել. «Իզմիրը (Զմյուռնիան) Պոլսոյ մրցակիցն է, շատ կետերու մէջ մինչեւ իսկ անկէ գերազանց, հայութիւնը հոն պարծանքով քայլեցավ միշտ օտար հասարակութեանց մէջ. նա տուավ ազգին երևելի վաճառականներ, մեծամեծ պաշտօնատարներ, գրագէտներ, գիտուններ»:

Բանալի բառեր և արտահայտություններ. *գիտության ու լուսավորության փարոս, հայեցի կրթություն, գոյապահպանության խնդիր, ուսյալ ազգ, առաքելություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի սկզբից մինչև 20-րդ դարի 20-ական թվականները Զմյուռնիան Կոնստանդնուպոլսի հետ մեկտեղ գրեթե բոլոր հայաբնակ վայրերի համար եղել է գիտության ու լուսավորության փարոս՝ վտարանդի հայության համար համարվելով «փոքր Հայրենիք», ազգային մշակույթի ու դպրոցի զարգացման նշանավոր կենտրոն, որի համբավը տարածվել է գաղթավայրի սահմաններից դուրս, <<փառավոր օրինակ և գրգիռ է ընծայել>> Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր հայաբնակ վայրերի համար, նույնիսկ Կ.Պոլսի՝ հաճախ դառնալով վերջինիս արժանավոր մրցակիցը: **(Գրիգորյան Ա., Բրուտյան Վ., 2007):** Զմյուռնահայ դպրոցական միջավայրից է սերել հայ լոսավորիչների մի տաղանդավոր սերունդ՝ Ստեփան Ոսկանյան, Գրիգոր Չիլինկիրյան, Մարկոս Աղաբեկյան, Մատթեոս Մամուրյան, Սրբուհի Երիցյան, Մեսրոպ և Գրիգոր Նուպարյաններ և շատ ուրիշներ, ովքեր ոգեշնչված ֆրանսիական լուսավորչական գաղափարներով, ծավալել են կրթական-մշակութային լայն գործունեություն, ստեղծել են ընկերություններ, ակումբներ, մշակույթի տներ, դպրոցներ, ընթերցատներ, թատրոն և այլն, դարձել են գրող, թարգմանիչ, հրապարակախոս, հասարակական, քաղաքական, մշակութային, հոգևոր գործիչ, բժիշկ, մանկավարժ, իրավաբան, խմբագիր, հրատարակիչ: Պատահական չէ, որ Փարիզում հրատարկվող «Փարիզ» թերթը ժամանակին գրել է. «Զմյուռնահայ Հայոց կեսը խմբագիր, օրագրի թղթակից, հեղինակ, թարգմանիչ, ուսուցիչ և ուսանող են: Հարկավ մյուս կեսն ալ ընթերցող պիտի ըլլան: Նախանձելի հառաջադիմութիւն» **(Գրիգորյան Ա., Բրուտյան Վ., 2007):**

Զմյուռնահայ կրթական գործունեության կազմակերպմանը մեծապես նպաստել են մի քանի տասնյակից ավելի դպրոցական-կրթական հոգաբարձուներ՝ Հովի. Նուպարյանը, Գր. Մսերյանը, Ս. Թագվորյանը, Մ.

Նուպարյանը և ուրիշներ, որոնցից շատերը տարբեր ժամանակներում ընտրվել են նաև Ուսումնական խորհրդի անդամներ:

Ընդհանուր առմամբ 19-րդ դարի առաջին տասնամյակներին արևմտահայ ուսումնական գործը գտնվել է անմխիթար վիճակում. գրեթե բացակայել են դասագրքերը, ուսուցման միասնական ծրագրերն ու պլանները, յուրաքանչյուր մանկավարժ աշխատել է իրեն հատուկ դասավանդման ոճով, ուսումնական առարկայի տևողությունը կախված է եղել աշակերտների անհատական առանձնահատկություններից և ուսուցչի դասավանդման սկզբունքներից ու մեթոդներից: Զմյուռնահայ դպրոցներում թեպետև կրթությունը համարվել է ընդհանուր ու հավասար բոլորի համար, սակայն նախակրթարանից հետո միայն հարուստ ընտանիքների զավակներն են կարողացել ուսումը շարունակել բարձր դասարաններում: Հիմնականում չքավոր և միջին կարողության տեր բազմաթիվ հայ ծնողների «նյութապես ապրելու» կարիքն ստիպել է նախակրթարանում ընդամենը 1-2 տարի սովորող իրենց զավակների դպրոցական կրթությունը ընդհատել և աշխատելու ուղարկել:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի արևմտահայ կրթօջախների և դրանցում հայրենանվեր գործունեություն ծավալած մտավորականների առաջադեմ գործունեությանն առնչվող ուսումնասիրությունները թեմատիկ առումով լայն ընդգրկվածություն ունեն: Դրանք հավասարապես պատմական, աշխարհագրական, բանասիրական, հնագիտական, աղբյուրագիտական և կրթադաստիարակչական մեծ արժեք ունեն: Ուստի հետազոտությունը կատարվել է հետազոտության գիտական ճանաչողության տեսական, պատմահամեմատական և համադրական-վերլուծական մեթոդներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Զմյուռնիայում դպրոցների հիմնադրման սկիզբը համարվում է 18-րդ դարի վերջը, երբ Կ. Պոլսի պատրիարքական վարժարանի օրինակով հիմնադրվել է **Ս. Մեսրոպյան վարժարանը** (1799-1922): Ապրոյան գերդաստանն իր սեփական

տներից մեկը նվիրել է դպրոցին, որտեղ հայ մանուկները գրել և կարդալ են սովորել: Ավելի ուշ՝ 1825 թվականին, Սբ. Ստեփանոս եկեղեցու միջոցներով նույն տեղում հիմնվելէ դպրոցի նոր շենքը:

«Մեսրոպյան վարժարանս հայոց ազգին թե՛ մեծատուն և թե՛ աղքատ ընդհանուր զավակաց ըլլալուն համար, երբեք խտրություն չէ կարող ընել աշակերտաց մեջ, վարժարանիս տված դաստիարակության ամենն ալ հավասար իրավունք ունին ընդունելու» **(Նազիկյան Գ., 1969):**

Տարբեր տարիներին նախակրթարանում դասավանդվել են ընթերցանություն, համառոտ քրիստոնեական վարդապետություն, թվաբանություն, մի շարք օտար լեզուներ (տաճկերեն, հունարեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն), գեղագիտություն, գլխավոր ուշադրությունը կենտրոնացվել է գրաբարի քերականության ուսուցման վրա: Քերականության դասընթացն ավարտելուց հետո դպրոցականներն ուսումը շարունակել են ավելի բարձր՝ ճարտասանության դասում, որտեղ բոլոր դասերը (գրաբար) դասավանդել է Մեսրոպյան վարժարանի տնօրեն Անդրեաս Փափազյանը: Նա ձգտել է հայերենի ուսուցումը դարձնել աշխարհաբար, սակայն այս փոփոխությունը կասեցվել է հետադիմական ուժերի կողմից: Այնուամենայնիվ, լուսավորիչ մանկավարժ Ա. Փափազյանը մասնակցել է մի շարք գրքերի աշխարհաբար թարգմանություններին, սահմանել է տարեվերջյան քննություններ, կազմակերպել մրցանակաբաշխության հանդեսներ, մեծ աշխատանք իրականացրել ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ: Բացի այդ, նրան հաջողվել է կանոնակարգել դպրոցական արձակուրդների և դասամիջոցների ժամանակացույցը:

Ա. Փափազյանի ավելի քան 25-ամյա տեսչական-մանկավարժական գործունեության ընթացքում զմյուռնահայ դպրոցական-լուսավորական կյանքում տեղի է ունեցել լուրջ բեկում: Պատահական չէ, որ Մեսրոպյան վարժարանի փափազյանական շրջանը համարվել է «**Ոսկեդար»:** 1867-1889թթ. վարժարանի տեսչության պաշտոնն ստանձնել է Մատթեոս Մամուրյանը և այն վարել է մոտ 20 տարի:

- Մեսրոպյան վարժարանն ունեցել է **Դպրոցական կանոնադրություն,** որը սահմանել է վարժարանի կրթության ուղղվածությունը, նպատակը, խնդիրները, բնույթը, հռչակել անվճար և պարտադիր կրթություն: Չափազանց արդիական են դպրոցական կանոնադրության մեջ սովորողներին առաջադրված պարտականությունները.
- սերը պետք է ընկերության հիմքը լինի,
- եղբայրասիրությունը և ընկերասիրությունը յուրաքանչյուր աշակերտ գործով պետք է ցույց տա,
- իրար հետ քեն և ատելություն չունենալ,
- կռվարար, վրիժառու և հակառակորդ չլինել,
- մեծերը պետք է ներողամիտ լինեն փոքրերի նկատմամբ, իսկ փոքրերը՝ հարգալից մեծերի նկատմամբ,
- օգնել կարիքի մեջ գտնվող ընկերոջը,
- մեկը մյուսի սխալները ներել և միմյանց թերությունները չնկատել,
- սիրել ծնողներին,
- հարգել խոստովանահորը և պատվել ուսուցչին,
- յուրաքանչյուր հայազգի պատանի պարտավոր է սիրել սեփական ազգը, կրոնը և լեզուն՝ իր ողջ հոգով և իր անձի պես:

Մեսրոպյան վարժարանը այն հայ դպրոցներից է, որի մասին ժամանակին շատ է խոսվել, շատ է գրվել, եղել են իրարամերժ կարծիքներ. գրվել են թե՛ գովասանական, և թե՛ քննադատական հոդվածներ: Սակայն ճշմարտությունն այն է, որ «բոլոր ժամանակներում, թե՛ իր վերելքի և թե՛ անկումային իրավիճակներում, վարժարանը մշտապես արժանացել է առաջադեմ հասարակայնության ջերմ համակրանքին, ստացել ժողովրդի նյութական ու բարոյական աջակցությունը» **(Ոսկանյան Շ., 2012):** Մանկավարժական տեսակետից արդիական ենք համարում այն փաստը, որ Ա. Փափազյանը Մեսրոպյան դպրոցում հմտորեն կիրառել է աշակերտների ինքնագործունեությունը, արհեստագործությունն ու գեղագիտական

դաստիարակությունն զարգացնելու հետաքրքիր հնարներ: Հիմնական նպատակն էր դեռևս աշակերտական նստարանից սաներին նախապատրաստել հանրօգուտ գործունեության: Ուստի վարժարանում աշակերտներին գործնականում սովորեցրել են զանազան արհեստներ, նաև տեսական գիտելիքները գործնականում կիրառելու ժամանակի համար անսովոր միջոցներ: Դրա վառ օրինակն էր վարժարանում սեփական ուժերով ստեղծված «ինքնաշեն» տպարանը, որտեղ տպագրվել են աշակերտների խմբագրած հանդեսները, նաև սեփական ստեղծագործությունները, որը բացառիկ երևույթ էր ժամանակի դպրոցների համար: Չնայած «խմբագիր-տպագրիչների» աշակերտական խմբակի կարճատև, բայց բավականին արդյունավետ գործունեությանը՝ այն անուրանալի դաստիարակչական դեր է խաղացել ինչպես ժամանակի, այնպես էլ հետագա տասնամյակների զմյուռնահայ դպրոցականների համակողմանի և հայեցի դաստիարակության գործում:

1850թ. Զմյուռնիայում սկսել է գործել **«Մարկոս Աղաբեկյան» մասնավոր երկսեռ վարժարանը,** որի հիմնադիրներ Մ. Աղաբեկյանի և Մ. Մամուրյանի մշակած ուսումնական նախագիծը լիովին բխել է ժամանակի զմյուռնահայության սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի պահանջներից և իր առաջադիմական մանկավարժությամբ ոչնչով չի զիջել ժամանակի եվրոպական, հատկապես ֆրանսիական միջնակարգ դպրոցների ուսումնական ծրագրերին: Այստեղ են բազմակողմանի կրթություն ու դաստիարակություն ստացել հայրենասեր մտավորականներ և լուսավորիչ մանկավարժներ Ներսես Պարտիզպանյանը, Գրիգոր Մսերյանը, Մեսրոպ Նուպարյանը, Սրբուհի Աղաբեկյանը և ուրիշներ:

Դիտարժան է, որ վարժարանում երեխաների ընդունելությունն սկսվել է 6 տարեկանից, նախակրթարանում ուսանել են մինչև 10-12 տարեկանը, ապա շարունակել ուսումը երկրորդական (միջնակարգ) դասարանում: Ուսումը վճարովի էր. եթե որևէ աշակերտ սահմանված առարկաներից բացի ցանկացել է այլ առարկա ևս (երաժշտություն, օտար լեզու և այլն) ուսանել, ապա դրա համար

վճարել է լրացուցիչ գումար: Եռամսյա ստուգարք-քննություններից բացի դպրոցում անցկացվել են տարեկան «փառավոր» քննություններ, որոնց ներկա են գտնվել համայնքի հայտնի անձինք, կազմակերպվել են նաև պարգևատրման շքեղ հանդեսներ:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ զմուռնահայ մանկավարժները ժամանակի համար առաջադիմական ոգով են լուծել հատկապես ուսուցման ու դաստիարակության միասնականության հարցը: Հայ լուսավորիչների կողմից հստակ առաջադրվել են դպրոցական ուսումն ու դաստիարակությունը զմյուռնահայ գաղթավայրի ժողովրդի կենսական կարիքների բավարարմանը հարմարեցնելու և ծառայացնելու, նրա պահանջների համեմատ համակողմանի հայեցի ոգով զարգացման կադրեր պատրաստելու պահանջները **(Գրիգորյան Ա., Բրուտյան Վ., 2007)**: Այդ նպատակով դպրոցականների բարոյական դաստիարակությունը բազմազան մեթոդներով ու հնարներով համակցվել է նրանց մտավոր, հոգևոր-բարոյական, ֆիզիկական, աշխատանքային, տնտեսագիտական, գեղագիտական, հայապահպանական դաստիարակության հետ՝ հաշվի առնելով դպրոցականների տարիքային և անհատական պահանջմունքները: Դպրոցներում կազմակերպվել են դաստիարակչական զրույցներ, ամենամյա հայրենասիրական և ազգային շքեղ տոնախմբություններ՝ նվիրված Ավարայրի ճակատամարտին, Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթևին:

Զմյուռնահայ դպրոցներում աստիճանաբար արմատավորված դաստիարակչական աշխատանքի կազմակերպման բազմազան ձևերն ու սկզբունքները կիրառվել են նաև արևմտահայ այլ դպրոցներում: Երեխաներին ճիշտ դաստիարակելու գործում շատ կարևոր է համարվել ծնողներին մանկավարժական-հոգեբանական, բժշկական անհրաժեշտ գիտելիքներով զինելը: Այս նպատակով նրանց համար հրատարակվել են առանձին հոդվածներ, գրքեր, կազմակերպվել զրույցներ, հորդորվել է վաղաժամ չընդհատել իրենց զավակների, մասնավորապես դուստրերի դպրոցական կրթությունն ու դաստիարակությունը: Ըստ այդմ, համակողմանիորեն դաստիարակված ու

կրթված հայ մայրեր պատրաստելը դարձել է ժամանակի հրամայական պահանջը: 19-րդ դարի սկզբին Զմյուռնիայում ընդունված ավանդույթի համաձայն, աղջիկներն իրենց կրթությունը ստացել են ընտանիքում, իսկ ովքեր գիտակցել են կրթության կարևորությունը, իրենց աղջիկ երեխաներին ուղարկել են մասնավոր գրաճանաչություն սովորելու: Սակայն 1920-ական թվականներին աղջիկների համար տեղի ազգային հիվանդանոցից հատկացվել է սրահ, որը որպես վարժարան է ծառայել ուսումնասեր ընտանիքների աղջիկների համար և որտեղ նրանք սովորել են գրել ու կարդալ տեղի քահանայի հսկողությամբ: Հետագայում հայազգի աղջիկների կանոնավոր կրթության համար Զմյուռնիայում կառուցվել է (1830-1835թթ.) առաջին իգական վարժարանը, ասեղնագործություն, որտեղ ուսումնական գործընթացներին համընթաց կազմակերպվել են թատերական ներկայացումներ, կարի ու ձեռքի աշխատանքի ցուցահանդես-տոնավաճառներ և այլն: Ընդհանուր առմամբ արևմտահայ մանկավարժներն առաջնորդվել են եվրոպական դասական մանկավարժների առաջադիմական գաղափարներով՝ մեծապես կարևորելով հայ աղջկա դպրոցական կրթությունը, իսկ դաստիարակության հիմքը տեսել են ընտանիքում, որտեղ ծնողական ամենօրյա խնամքի և դաստիարակության միջոցով սկսվել է ապագա հայ կնոջ հոգևոր կերպարի ձևավորման գործընթացը: Ուստի պատահական չէ, որ Մ.Մամուրյանն ու նրա գաղափարակիցները հայ մայրերին են ապավինել երեխաների դաստիարակության նպատակների իրականացումը, պահանջել կնոջ սիրտը բարոյականությամբ կազդուրել, միտքը՝ լուսավորել կրթությամբ, քանզի «ապագան անոր ձեռքն է, այն պիտի ըլլա մեր հույսը, այն պետք է ըլլա կերպիվ իւիք հիմնարկու բարոյական զենքի մը, զոր ոմանք կերազեն և որուն կանգնումը ցնորք մէ առանց ազատաբույր գրականության ու դաստիարակության» **(Գրիգորյան Ա., Բրուտյան Վ., 2007)**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով ասվածը, վստահաբար կարող ենք փաստել, որ զմյուռնահայ կրթօջախների նորարարական, լուսավորչական գործունեությունը իրավամբ հայ

մանկավարժական մտքի մի կարևոր մասն է: Պատահական չէ, որ զմյուռնահայ դպրոցները արժանացել են «Նոր Աթենք», «Նոր Պառնաս», «Աթենյան տաճար» և այլ պատվանունների **(Գրիգորյան Ա., Բրուտյան Վ., 2007):**

Համոզված ենք, որ զմյուռնահայ կրթական գործի իմացությունը կարող է նպաստել ժամանակակից անձի ազգային հոգեկերտվածքի և ինքնության ձևավորմանը՝ նրա մեջ զարգացնելով հայ ժողովրդի կրթական ժառանգությունը գիտակցաբար վերլուծելու, արժևորելու և դրանում առկա հարուստ գիտելիքը իր գործունեության ընթացքում կիրառելու մասնագիտական կարողություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գրիգորյան Ա., Բրուտյան Վ. (2007),** Զմյուռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր, Երևան, «Իրավունք» հրատ.:
2. **Նազիկյան Գ. (1969),** Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Երևան, «Լույս» հրատ.:
3. **Ոսկանյան Շ. (2012),** Արևմտահայ դպրոցի կրթության և մշակույթի նշանավոր գործիչները /1850-1920թթ/, Երևան, «Մանկավարժ» հրատ.:

REFERENCES

1. **Grigoryan A., Brutyan V. (2007),** Zmyowr'nahay krt'akan-mshakowt'ayin kyanqi patmowt'yan owrvagc'er /Outlines of the History of 's Armenian Educational and Cultural Life of the Armenians of Zmyrnia/, Yerevan, «Iravunq» Publishing House.
2. **Nazikyan G. (1969),** Ar&mtahay mankavarjhakan mitqn ow dprocy' /Western Armenian Pedagogical Thought and School/, Yerevan, "Luys" Publishing House.
3. **Voskanyan Sh. (2012),** Ar&mtahay dproci krt'owt'yan & mshakowyt'i nshanavor gorc'ichnery' /1850-1920t't'/ /Prominent Figures of Education and Culture of the Western Armenian School /1850-1920//, Yerevan, «Mankavarj» Publishing House.

Сусанна Сисян, Изабелла Бабаян

Образование в школах Змюрнии 19 века

Заключение

Ключевые слова и выражения: *маяк науки и просвещения, армянское образование, проблема выживания, образованная нация, миссия.*

Во все периоды истории армянская школа была важнейшей колыбелью национального образования, распространения просвещения и выживания. В этом отношении прогрессивная деятельность армянских просветительских центров Змюрнии XIX века и осуществлявших в них патриотическую деятельность интеллигенции, основной миссией которых было воспитание поколений на армянском языке, донесение их исторических истоков и проведение работы сохранения Армении, чрезвычайно важно. В статье на основе изучения старой печати, архивных материалов и других профессиональных источников мы проанализировали некоторые вопросы образовательного характера армянских учебных заведений Змюрнии с точки зрения сегодняшнего дня и оценили значительную роль прогрессивной армянской интеллигенции, которая училась, а затем продолжила обучать армянские поколения в школах Западной Армении.

Как отметил Г. Ачарян «Измир (Змюрния) является соперником Константинополя, даже превосходит его во многих вопросах. Армяне там всегда с гордостью ходят в чужом обществе. Змюрния дала нашему народу знаменитых купцов, великих чиновников и ученых».

Susanna Sisyan, Izabella Babayan

Education in the schools of Zmyrnia in the 19th century

Conclusion

Key words and expressions: *beacon of science and enlightenment, Armenian education, problem of survival, learned nation, mission.*

In all periods of history, the Armenian school has been the most important cradle of national education, the spread of enlightenment, and the preservation of existence. In this regard, the progressive activities of the Armenian educational institutions of Smyrna in the 19th century and the patriotic activities of the intellectuals who carried out their activities there are extremely significant, whose main mission was to educate generations as Armenians, to make them aware of their historical origins, and to carry out the work of preserving the Armenian identity.

In the article, through a critical study of old press, archival materials, and other professional sources, we have analyzed some issues of a modern educational nature of the Armenian educational institutions of Zmyrnia from today's perspective and valued the significant role of those progressive Armenian intellectuals who studied and then continued to educate Armenian generations in those schools of Western Armenia.

As G. Acharyan noted, "Izmir (Zmyrnia) is a rival of Constantinople, even surpassing it in many matters. Armenians there always walk proudly in foreign company. Zmyrnia gave our people famous merchants, great officials and scientists."

Սուսաննա Սիսյան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկ. գիտ. թեկն.: Գիտական հետաքրքրությունները՝ բարձրագույն և մասնագիտական դպրոցի մանկավարժություն, մանկավարժական արժեբանություն, մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, մանկավարժական մարդաբանություն: Հեղինակ է 72 հոդվածի: sisyan.susanna@gmail.com

Իզաբելլա Բաբայան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկ. գիտ. թեկն.: Գիտական հետաքրքրությունները՝ բարձրագույն և մասնագիտական դպրոցի մանկավարժություն, մանկավարժական հաղորդակցում, մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, մանկավարժական մարդաբանություն: Հեղինակ է 54 հոդվածի: izabellababayan@gmail.com

Сусанна Сисян - Кандидат педагогических наук, доцент, преподаватель. Кафедра педагогики в АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: Педагогика высшей и профессиональной школы, Педагогическая Аксиология, Методология педагогических исследований, Педагогическая антропология. Автор 72 статей. sisyan.susanna@gmail.com

Изабелла Бабаян - Кандидат педагогических наук, доцент, преподаватель. Кафедра педагогики в АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: Педагогика высшей и профессиональной школы, Педагогическая Аксиология, Методология педагогических исследований, Педагогическая антропология. Автор 54 статей. izabellababayan@gmail.com

Susanna Sisyan- PhD of Pedagogical Sciences, Associate Professor, Lecturer. Chair of Pedagogy, ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Higher and Proffesional School Pedagogy, Pedagogical Acsiology, Pedagogical Research Methodology, Pedagogical Anthropology. Author of 72 articles. Phone number: sisyan.susanna@gmail.com

Izabella Babayan- PhD of Pedagogical Sciences, Associate Professor, Lecturer. Chair of Pedagogy, ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Higher and Proffesional School Pedagogy, Pedagogical Acsiology, Pedagogical Research Methodology, Pedagogical Anthropology. Author of 54 articles. Phone number: izabellababayan@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 14.10.2024թ.
Հանձնարարվել է գրախոսության 28.10.2024թ.
Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.